



«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ



ԶԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն

Էլ. հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ հոգաբարձուների խորհրդին

ԶԱՄՓՈՒՎԱԾ ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով բացառությամբ «Կարծիքի ձևափոխման հիմքեր» պարագրաֆում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԿԱՐԾԻՔԻ ԶԱՄՓՈՒՄԱՆ ՀԻՄՔԵՐ

Աուդիտի ընթացքում, արտաքին հաստատման ընթացակարգերի շրջանակներում, մենք գործընկերներին ուղարկել ենք հաստատման հարցումներ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված դեբիտորական պարտքերի, տրված կանխավճարների և կրեդիտորական պարտքերի մնացորդների վերաբերյալ:

Մինչև սույն աուդիտորական եզրակացության ամսաթիվը մենք չենք ստացել մեկ գործընկերոջ մասով 5,818,176 հազ. դրամի հաստատական նամակ՝ տրված կանխավճարի մնացորդի վերաբերյալ: Նշված մնացորդի վերաբերյալ հնարավոր չի եղել իրականացնել այնպիսի այլընտրանքային աուդիտորական ընթացակարգեր, որոնց միջոցով հնարավոր կլիներ ձեռք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ դրա ամբողջականության և ճշտության վերաբերյալ:

Հետևաբար, մենք չկարողացանք որոշել, թե արդյոք անհրաժեշտ էին որևէ ճշգրտումներ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված տրված կանխավճարների մասով:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրը) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:



ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն

Էլ. հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՌՈՂԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՂԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանաց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- ✚ Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:
- ✚ Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- ✚ Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:



ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն

Էլ. հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

- ✚ Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- ✚ Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- ✚ Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան, 19.06.2026թ.

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝



Գոհար Մարգարյան

Որակավորված աուդիտոր՝

Արփինե Խաչատրյան

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	2
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	3
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	5
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	6

**«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հազար դրամ	Ծնթ.	31.12.2025թ.	31.12.2024թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	109,582	122,917
Ոչ նյութական ակտիվներ	3	2,379	1,501
Հետաձգված հարկային ակտիվ		12,395	2,045
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		124,356	126,463
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		12,937	8,519
Դեբիտորական պարտքեր		499,252	322,736
Ստացվելիք ֆոնդեր	4	618,224,290	178,393,068
Տրված կանխավճարներ	5	10,168,259	20,940,817
Տրված փոխառություններ		10,509	10,509
Դրամական միջոցներ	6	12,084,435	13,067,309
Այլ ակտիվներ		14,875,657	6,548,342
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		655,875,339	219,291,300
Ընդամենը ակտիվներ		655,999,695	219,417,763
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Զուտ ակտիվներ	7		
Կուտակված հավելույդ(պակասույդ)		(6,539,291)	(8,036,714)
Վերագնահատման պահուստ		45,525	-
Ընդամենը զուտ ակտիվներ		(6,493,766)	(8,036,714)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		100,532	124,418
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		100,532	124,418
Եկամուտներին վերաբերող շնորհներ	8	653,628,702	215,588,269
Կրեդիտորական պարտքեր	9	8,695,364	11,730,431
Պահուստներ		68,863	11,360
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		662,392,929	227,330,060
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		655,999,695	219,417,763

Սույն Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 26.06.2026թ.:

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐ - ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՀԱԵՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱԵՎԱՌՄԱՆ և ՀԱԵՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝



ԱՐԿԱԴԻ ՉԵՐՉԻՆՅԱՆ

ՇՈՒԷԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարվող տարվա համար**

Հազար դրամ	Ծնթ.	2025թ.	2024թ.
Ծրագրային ծախսեր		(36,261,443)	(34,895,573)
Եկամուտ շնորհներից	10	36,261,443	34,895,573
Այլ եկամուտ, զուտ		563,405	233,099
Օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերությունից զուտ		(545,482)	(876,149)
Տարվա արդյունք մինչև հարկումը		17,923	(643,050)
Շահութահարկ փոհատուցում/(ծախս)	11	(5,891)	(43,327)
Տարվա արդյունք		12,032	(686,377)
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Տարվա համապարփակ արդյունք		12,032	(686,377)

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐ - ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՀԱԵՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱԵՎԱԴՐՄԱՆ և ՀԱԵՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝



ԱՐԿԱԴԻ ՉԵՐՉԻՆՅԱՆ

ՇՈՒԽԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Վերագնահատման պահուստ	Ընդամենը
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	(7,350,337)	-	(7,350,337)
Նախորդ ժամանակաշրջանների սխալների ճշգրտում			
Տարվա արդյունք	(686,377)		(686,377)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	(8,036,714)	-	(8,036,714)
Նախորդ ժամանակաշրջանների սխալների ճշգրտում	1,485,391		1,485,391
Տարվա արդյունք	12,032	45,525	57,557
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2025թ.	(6,539,291)	45,525	(6,493,766)

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
 ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԵՎԱՎԱՐ - ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
 ՀԱՇՎԱՌՄԱՆ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԲԱԺՆԻ ՊԵՏ՝



ԱՐԿԱԴԻ ԶԵՐԶԻՆՅԱՆ

ՇՈՒԽԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Ծնթ.	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Ստացված/(վերադարձված) ֆոնդեր			
ԿՆՃ ՀԲ		-	-
Տրանշ 2, ԱԶԲ		-	-
Տրանշ 3, ԵՆԲ	13,409,003		2,626,598
Տրանշ 3, ԱԶԲ	532,986		1,524,951
Տրանշ 4, ԵԱԶԲ Քաջարան-Ագարակ	245,446		1,904,045
Մ6, ԱԶԲ	21,796,450		17,900,743
Մ6, ԵՆԲ	489,348		196,427
Սև կետեր ԵՆԲ	6,013	-	-
Բազրատաշենի կամուրջ	2,998		52,000
Տրանշ 4, Քաջարանի թունել	-		14,000
Տրանշ 4, ԱԶԲ Սիսիան-Քաջարան	136,233	-	-
Տրանշ 4, ԵՆԲ Սիսիան-Քաջարան	64,024	-	-
Տրանշ 4, ՎԶԵԲ Սիսիան-Քաջարան	-	-	-
ՃՅԲԾ	-		628,948
Այլ	734,426		843,735
	373,869		5,260,242
	37,790,796		30,951,689
Ծրագրային ելքեր			
ԿՆՃ ՀԲ		-	-
Տրանշ 2, ԱԶԲ		-	-
Տրանշ 3, ԵՆԲ	(13,409,003)		(2,337,778)
Տրանշ 3, ԱԶԲ	(352,528)		(2,255,156)
Տրանշ 4, ԵԱԶԲ Քաջարան-Ագարակ	(245,586)		(1,988,464)
Մ6, ԱԶԲ	(20,484,637)		(11,214,716)
Մ6, ԵՆԲ	(486,232)		(196,896)
Սև կետեր ԵՆԲ	-		-
Բազրատաշենի կամուրջ	-		(307,418)
Տրանշ 4, Քաջարանի թունել	-		(14,025)
Տրանշ 4, ԱԶԲ Սիսիան-Քաջարան	(47,630)	-	-
Տրանշ 4, ԵՆԲ Սիսիան-Քաջարան	(692,972)	-	-
Տրանշ 4, ՎԶԵԲ Սիսիան-Քաջարան	-	-	-
ՃՅԲԾ	-	-	-
Այլ ելքեր	(689,218)		(894,033)
	(2,482,999)		(4,599,647)
	(38,890,805)		(23,808,133)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր			
Արտարժույթի փոխարժեքային տարբերության ազդեցությունը		117,135	(255,378)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		(982,874)	6,888,178
Դրամական միջոցների մնացորդն առ 01 հունվարի		13,067,309	6,179,131
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի		12,084,435	13,067,309

6-19 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐ - ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝



ԱՐԿԱԴԻ ՉԵՐՉԻՆՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ՀԻՄՆԱԴՐԱՄԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հանդիսանում է «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) իրավահաջորդը: Համաձայն ՀՀ կառավարության 6 օգոստոսի 2021թ. թիվ 1298-Ա որոշման ՊՈԱԿ-ը 14.10.2021թ-ին վերակազմակերպվեց որպես «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ:

Հիմնադրամն իր միակ հիմնադիր ՀՀ Կառավարության թիվ 1298-Ա որոշման համաձայն 14.10.2021թ-ից նոր կանոնադրության հիման վրա շարունակում է ՊՈԱԿ-ի բնականոն գործունեությունը՝ որպես անկախ շահույթ չհետապնդող կազմակերպություն:

Հիմնադրամի հիմնական նպատակն է՝ իր իրավասության սահմաններում, ՀՀ ճանապարհային ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումը, այդ թվում՝ ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու տարածքային կառավարման մարմինների կողմից մշակված՝ տրանսպորտի ոլորտի կապիտալ ու զարգացման ծրագրերի մասով (ՀՀ պետական բյուջեի) և օտարերկրյա պետությունների ու միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից ՀՀ-ին տրամադրվող միջոցների հաշվին մշակված ծրագրերն ու աշխատանքները:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն 3:

2025 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունեցել է 119 աշխատակից:

1.2 ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

31.12.2025թ-ին ավարտվող տարում Հիմնադրամն իրականացրել է հետևյալ հիմնական ծրագրերը.

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 2 ԱԶԲ), որը ֆինանսավորվում է համաձայն 2011թ-ի մայիսի 30-ին Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման բանկի միջև կնքված թիվ 2729-ARM համաձայնագրի, որի նպատակն է միջպետական ճանապարհային տրանսպորտի տրանզիտի հեշտացումը, Աշտարակ-Թալին 42 կմ երկու երթևեկելի գոտի ունեցող 2-րդ տեխնիկական կարգի ճանապարհի վերակառուցումն ու լայնացումը չորս երթևեկելի գոտով 1-ին տեխնիկական կարգի ճանապարհի:
- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր Տրանշ 3 (Տրանշ 3 ԵՆԲ, ԵՄ և Տրանշ 3 ԱԶԲ): Այս ծրագիրը բաղկացած է երկու մասից՝ մի մասը ֆինանսավորվում է համաձայն Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Ներդրումային Բանկի միջև 2013թ-ի նոյեմբերի 18-ին կնքված թիվ 82634-AM ֆինանսական պայմանագրի (Տրանշ 3 ԵՆԲ վարկ), Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Ներդրումային Բանկի միջև 2016թ-ի նոյեմբերի 18-ին կնքված թիվ 82634-AM դրամաշնորհային պայմանագրի (Տրանշ 3 ԵՆԲ դրամաշնորհ) շրջանակներում, իսկ մյուս մասը՝ համաձայն Հայաստանի հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2014թ-ի մարտի 11-ին կնքված 2993-ARM համաձայնագրի շրջանակներում (Տրանշ 3 ԱԶԲ վարկ): Ծրագրի նպատակն է ՀՀ տարածքում զարգացնել միջտարածաշրջանային և պետական ճանապարհատրանսպորտային ցանցը, բարելավել ու բարեկարգել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքը Հայաստանում՝ Թալին-Լանջիկ-Գյումրի 41,7 կմ հատվածում:
- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ներդրումային ծրագիր (Տրանշ 4 ԵԶԲ), որը ֆինանսավորվում է համաձայն 2015թ-ի ապրիլի 14-ին և 2017թ-ի հոկտեմբերի 25-ին (համաձայնագիր 2) Հայաստանի Հանրապետության և Եվրասիական Զարգացման բանկի միջև կնքված համաձայնագրերի, և որի նպատակն է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի

Ագարակ քաղաքից դեպի Քաջարան ճանապարհահատվածի (32 ԿՄ) թողունակությունն ու վթարային վիճակի նվազեցումը:

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման Քաջարանի թունելի և մոտեցումների Ծրագիր (Տրանշ 4-Քաջարանի թունել – ԿՁԵՀ), որը ֆինանսավորվում է համաձայն Հայաստանի Հանրապետության և Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջև 2024թ-ի հուլիսի 26-ին ստորագրված «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի ֆինանսավորման վարկային համաձայնագրի, որի շրջանակներում նախատեսված է իրականացնել Քաջարանի թունելի (երկարությունը՝ շուրջ 7.0 կմ) կառուցման և գոյություն ունեցող Մ2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման շուրջ 4 կմ (Քաջարանի թունելի մուտք - Սիսիան-Քաջարան նախատեսվող նոր ճանապարհահատվածի խաչմերուկ) երկարությամբ հատվածի վերակառուցման աշխատանքները:
- Հայաստան-Վրաստան սահմանի տարածաշրջանային ճանապարհի բարելավման ծրագիր, որը ֆինանսավորվում է 2016թ-ի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության և Ասիական Ջարգացման բանկի միջև կնքված թիվ 3449-ARM համաձայնագրի համաձայն (Մ6-ԱԶԲ), Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Ներդրումային Բանկի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում (Մ6-ԵՆԲ), և որի նպատակն է բարելավել տրանսպորտի արդյունավետությունն ու անվտանգությունը ՀՀ տարածքում գտնվող Մ6 ավտոմայրուղու Վանաձոր-Բագրատաշեն, Վանաձոր- Ալավերդի-Վրաստան հատվածներում:
- Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման (վթարավտանգ հատվածների վերացման) Ծրագիրը ավարտվել է 2022թ. դեկտեմբերի 21-ին և գտնվում է հետերաշխիքային փուլում: Ծրագրի նպատակն է մի շարք հանրապետական, միջպետական տարածաշրջանային ճանապարհների անվտանգության բարելավումը (վթարավտանգ կետերի վերացում), ինչպես նաև ճանապարհների նախագծմամբ զբաղվող մի շարք հաստատություններում ճանապարհային անվտանգության մասով աուդիտորական կարողությունների զարգացումը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 47 «սև կետերի» բարելավման և միջպետական նշանակության ավտոճանապարհի 38,4 կմ երկարությամբ հատվածի անվտանգության էլեմենտների բարելավման աշխատանքներ:
- ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն անցման կետի կամրջի վերակառուցման ծրագիր (Բագրատաշենի կամուրջ), որը ֆինանսավորվում է համաձայն 2012թ-ի նոյեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Ջարգացման բանկի միջև կնքված պայմանագրի: Ծրագրի նպատակն է Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցումը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը՝ ներառյալ վերահսկողության և մոնիտորինգի հարցերում աջակցության ցուցաբերումը:
Շինարարական աշխատանքները ավարտվել են և 2022թ. օգոստոսի 19-ին, տեղի է ունեցել պաշտոնական բացման արարողությունը, - կամուրջը հանձնվել է շահագործման: Ընթացքի մեջ է թերությունների վերացման ժամանակահատվածը:
- Ճանապարհային ցանցի բարելավման շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ ծրագիր, որը ֆինանսավորվել է համաձայն ՀՀ կառավարության 28.12.2023թ-ի թիվ 2323-Ն, 01 փետրվարի 2024թ-ի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ ԾԴ-ԴՊ-2025/1 պայմանագրի, և որի նպատակն է իրականացնել ՀՀ-ում ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն, ուսումնասիրություններ և փորձաքննություններ:
- Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Քաջարանի թունելի և մոտեցումների ծրագիր: Նախատեսվում է իրականացնել Քաջարանի թունելի (երկարությունը՝ շուրջ 7.2 կմ) կառուցման և գոյություն ունեցող Մ2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման շուրջ 4 կմ (Քաջարանի թունելի մուտք - Սիսիան-Քաջարան նախատեսվող նոր ճանապարհահատվածի խաչմերուկ) երկարությամբ հատվածի վերակառուցման աշխատանքները: Ծրագիրն իրականացվում է Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև «Քաջարանի թունելի կառուցման» ծրագրի

- ֆինանսավորման համար 26.07.2024թ-ին կնքված համաձայնագրով Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամից ներդրումային վարկի միջոցներով:
- Հայաստանում դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր: Կլիմայական և աղետներին դիմակայող ճանապարհային կապի բարելավում 27.1 կմ երկարությամբ նոր ճանապարհի կառուցման միջոցով՝ վերելքի գոտիներով, կամուրջներով և թունելներով: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 18.03.2025թ-ին կնքված թիվ 4575-ARM վարկային համաձայնագրի շրջանակներում և ԵՆԲ-ի ֆինանսավորմամբ:

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԻ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

2.2 ՆՈՐ և ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԻ) և ՀՀՄՍԻ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),
- «Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում» (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),
- «Մատակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ» (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- «Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառելի են 2026թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, ղեկավարության կանխատեսմամբ որևէ էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»
- ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության բացահայտումներ»

2.3 ՉԱՓՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

6-19 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.4 ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ և ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը հանդիսանում է Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.5 ԱՆԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով: Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար:

2.6 ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնադրամի գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Չնայած ենթադրությունները և դատողությունները հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.7 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՈՒՄ

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում: Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալները: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1. Նույնական ակտիվների և պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)
- Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

2.8 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ - ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ:

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Ստացվելիք ֆոնդեր,
- Դրամական միջոցներ,
- Կրեդիտորական պարտքեր:

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

Հազար դրամ	
Ամորտիզացված արժեքով չափվող Ֆինանսական ակտիվներ	31.12.2025թ-ի դրությամբ
Տրված փոխառություններ	10,509
Ստացվելիք ֆոնդեր	618,224,290
Դրամական միջոցներ	12,084,435
Ընդամենը՝	630,319,234

Հազար դրամ	
Ամորտիզացված արժեքով չափվող Ֆինանսական պարտավորություններ	31.12.2025թ-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր	8,695,364

Հազար դրամ	
Ամորտիզացված արժեքով չափվող Ֆինանսական ակտիվներ	31.12.2024թ-ի դրությամբ
Տրված փոխառություններ	10,509
Ստացվելիք ֆոնդեր	178,393,068
Դրամական միջոցներ	13,067,309
Ընդամենը՝	191,470,886

Հազար դրամ	
Ամորտիզացված արժեքով չափվող Ֆինանսական պարտավորություններ	31.12.2024թ-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր	11,730,431

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են ստացվելիք ֆոնդերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, կրեդիտորական պարտքերը:

Դրամական միջոցների, ստացվելիք ֆոնդերի և դրանց համարժեքների, կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

2.9 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

6-19 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Հիմնադրամի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է հոգաբարձուների խորհրդի կողմից:

Հոգաբարձուների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ հնարավորինս բացառելու Հիմնադրամի արդյունավետ գործունեությանը խանգարող հանգամանքների առաջացումը: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտավորությունների չկատարմամբ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ Հիմնադրամը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի:

Արտարժույթային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում արտարժույթի նկատմամբ ֆունկցիոնալ արժույթի միջին փոխարժեքը:

Հիմնադրամի բանկային հաշիվները վարվում, իսկ գործարքներն իրականացվում են ԱՄՆ դոլարով (USD), Եվրոյով (EUR) և ՀՀ դրամով (AMD): ԱՄՆ դոլարով և Եվրոյով արտահայտված գործարքները փոխարկվում են ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած միջին փոխարժեքով:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված USD-ի և EUR-ի միջին փոխարժեքները AMD-ի նկատմամբ հետևյալն են.

	31.12.2025թ. դրությամբ միջին փոխարժեք ՀՀ դրամ	31.12.2024թ. դրությամբ միջին փոխարժեք ՀՀ դրամ
1USD	381.51	396.56
1 EUR	446.94	413.89

2.10 ՇՆՈՐՀՆԵՐ

Շնորհները, որոնք որոշակի պայմաններով տրվում են Հիմնադրամին՝ կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրենց իրական արժեքով, երբ կա հիմնավորված երաշխիք, որ

ա) Հիմնադրամը կատարելու է դրամաշնորհներին հարակից պայմանները, և

բ) դրամաշնորհներն ստացվելու են:

6-19 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Հիմնական միջոցների ձեռքբերմանը վերաբերող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ծախսերին վերաբերող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են այն ծախսերը, որոնց համար ստացվել են:

2.11 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ: Ընթացիկ վերանորոգումները և պահպանման ծախսերը ծախսագրվում են նրանց կատարման պահին: Հիմնական միջոցների բաղկացուցիչների փոխարինման ծախսերը կապիտալացվում են, իսկ փոխարինված բաղկացուցիչները ապաճանաչվում են:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ կիրառելով մաշվածության հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

- Մեքենա-սարքավորումներ՝ 8 տարի
- Տրանսպորտային միջոցներ՝ 8 տարի
- Գրասենյակային գույք՝ 8 տարի
- Համակարգչային տեխնիկա՝ 3 տարի

2.12 ՈՋ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Ոջ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթ կամ վնաս կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոջ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

- Համակարգչային ծրագիր՝ 8 տարի
- Լիցենզիաներ և վստահագրեր՝ 20 տարի:

2.13 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

2.14 ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

Կանխավճարները հաշվառվում են արժեքից հանելով արժեզրկումից կորուստները: Եթե կա հայտանիշ, որ կանխավճարի հետ կապված ակտիվը, ապրանքը կամ ծառայությունը չեն ստացվելու, կանխավճարի

6-19 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում, իսկ դրա համապատասխան արժեգրկումից կորուստը ճանաչվում է շահույթ կամ վնաս:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ՈՋ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հիմնական միջոցներն իրենցից ներկայացնում են ակտիվներ, որոնք ձեռք են բերվել ծրագրերի շրջանակներում օգտագործման համար:

Հազար դրամ	Շենքեր	Մեքենաներ և սարքա- վորումներ	Տրանսպոր- տային միջոցներ	Գրասենյա- կային գույք և այլն	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	446,725	109,501	108,010	18,214	682,450
Ձեռքբերումներ		56,016	19,574	23,004	-	98,594
Դուրսգրումներ		(26,903)	(10,047)	(10,741)	-	(47,691)
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	-	475,838	119,028	120,273	18,214	733,353
Ձեռքբերումներ		95,561	47,283	31,844	3,435	178,123
Դուրսգրումներ		(87,262)	(50,568)	(27,203)	(1,660)	(166,693)
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	-	484,137	115,743	124,914	19,989	744,783
Կուտակված մաշվածություն						
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	-	(385,700)	(90,171)	(94,061)	(16,367)	(586,299)
Տարեկան մաշվածության ծախս		(14,554)	(6,099)	(1,637)	(346)	(22,636)
Դուրսգրումներ						-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	-	(400,254)	(96,270)	(95,698)	(16,713)	(608,935)
Տարեկան մաշվածության ծախս		(16,351)	(7,810)	(4,715)	(900)	(29,776)
Դուրսգրումներ		180	5,687	19	3	5,889
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	-	(416,425)	(98,393)	(100,394)	(17,610)	(632,822)
Հաշվեկշռային արժեքն առ 31.12.2024թ.	-	75,584	22,758	24,575	1,501	124,418
Հաշվեկշռային արժեքն առ 31.12.2025թ.	-	67,712	17,350	24,520	2,379	111,961

4. ԱՏԱՅՎԵԼԻՔ ՖՈՆԴԵՐ

Իրենցից ներկայացնում են Հիմնադրամի ծրագրերի իրականացման համար ստացվելիք ֆոնդերը.

Հազար դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.
Ծրագիր		
ԿՆՃ ՀԲ		
Տրանշ 2 ԱԶԲ		
Տրանշ 2 ԱԶԲ ՀՀ մաս	3,771,443	5,389,628
Տրանշ 3 ԵՆԲ ՀՀ մաս	2,525,471	1,077,926
Տրանշ 3 ԱԶԲ	639,564	-
Տրանշ 3 ԱԶԲ ՀՀ մաս	-	5,052,558
Տրանշ 4 Քաջարան-Ագարակ ԿԶԵՀ	-	1,010,512
Տրանշ 4 Քաջարան-Ագարակ ԿԶԵՀ ՀՀ մաս	22,288,666	41,815,353
Մ6-ԱԶԲ	38,577,712	43,238,278
Մ6-ԱԶԲ ՀՀ մաս	839,262	1,247,344
Սև կետեր ԵՆԲ	11,707	249,469
Բազրատաշենի կամուրջ	-	-
Տրանշ 4, Քաջարանի թունել ԿԶԵՀ	-	-
Տրանշ 4, Քաջարանի թունել ԿԶԵՀ ՀՀ մաս	76,157,592	79,312,000
Տրանշ 4, Սիսիան Քաջարան Հյուսիս, ԱԶԲ	74,533,061	-
Տրանշ 4, Սիսիան Քաջարան Հյուսիս, ԵՆԲ	105,966,360	-
Տրանշ 4, Սիսիան Քաջարան Հյուսիս, ՀՀ մաս	44,451,990	-
Տրանշ 4, Սիսիան Քաջարան Հարավ, ԿԶԵՀ	46,486,005	-
Տրանշ 4, Սիսիան Քաջարան Հարավ, ԵՆԲ	105,966,360	-
Տրանշ 4, Սիսիան Քաջարան Հարավ, ՀՀ մաս	61,514,370	-
Տրանշ 4, Սիսիան Քաջարան Հարավ, ՀՀ մաս	34,494,727	-
Ընդամենը	618,224,290	178,393,068

5. ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

Հազար դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.
Շինարարական աշխատանքների գծով		
Խորհրդատվական ծառայությունների գծով	9,730,082	20,383,826
Այլ	438,177	556,991
Ընդամենը	10,168,259	20,940,817

Մինչև 20% կանխավճար տրամադրվում է շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին՝ համապատասխան բանկային երաշխիքների ստացման դեպքում:

6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար դրամ		31.12.2025թ.	
Ծրագիր	Արժույթ	Գումար արժույթ	Գումար ՀՀ դրամ
Տրանշ 3, ԵՆԲ	Եվրո	9,747,977	4,376,939
Տրանշ 3, ԱԶԲ	ՀՀ դրամ		21
	ԱՄՆ դոլար	-	-

6-19 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Տրանշ 4, ԱԶԲ Սիսիան-Քաջարան	ՀՀ դրամ		196,489
	ՀՀ դրամ		-
	ԱՄՆ դոլար	-	-
Տրանշ 4, ԵԱԶԲ Քաջարան-Ագարակ	ՀՀ դրամ		-
	ԱՄՆ դոլար	18,750,615	7,150,735
Տրանշ 4, ՎԶԵԲ Սիսիան-Քաջարան	ՀՀ դրամ		-
Տրանշ 4, Քաջարանի թունել	ԱՄՆ դոլար	232,331	88,602
Մ6, ԱԶԲ	Եվրո	6,973	3,131
	ՀՀ դրամ		-
Մ6, ԵՆԲ	Եվրո	171,206	76,873
Սև կետեր ԵՆԲ	Եվրո	85,377	38,335
Սև կետեր ԵՆԲ Համաֆինանսավորում	ՀՀ դրամ		-
Բազրատաշենի կամուրջ	ՀՀ դրամ		-
ՃՅԲԾ	ՀՀ դրամ		114,430
Այլ հաշիվներ	ԱՄՆ դոլար	41,939	15,994
	ՀՀ դրամ		22,886
Ընդամենը			12,084,435

Հազար դրամ

31.12.2024թ.

Ծրագիր	Արժույթ	Գումար արժույթ	Գումար ՀՀ դրամ
Տրանշ 3, ԵՆԲ	Եվրո	10,139,171	4,196,502
	ՀՀ դրամ		-
Տրանշ 3, ԱԶԲ	ԱՄՆ դոլար	41,965	16,642
	ՀՀ դրամ		179,988
Տրանշ 4, ԱԶԲ Սիսիան-Քաջարան	ՀՀ դրամ		628,948
	ԱՄՆ դոլար	-	-
Տրանշ 4, ԵԱԶԲ Քաջարան-Ագարակ	ՀՀ դրամ		-
	ԱՄՆ դոլար	14,723,929	5,838,921
Տրանշ 4, ՎԶԵԲ Սիսիան-Քաջարան	ՀՀ դրամ		-
Տրանշ 4, Քաջարանի թունել	ԱՄՆ դոլար	-	-
Մ6, ԱԶԲ	Եվրո	37	15
	ՀՀ դրամ		-
Մ6, ԵՆԲ	Եվրո	171,206	70,860
Սև կետեր ԵՆԲ	Եվրո	85,377	35,336
Սև կետեր ԵՆԲ Համաֆինանսավորում	ՀՀ դրամ		-
Բազրատաշենի կամուրջ	ՀՀ դրամ		-
ՃՅԲԾ	ՀՀ դրամ		69,222
Այլ հաշիվներ	Եվրո	-	-
	ՀՀ դրամ		2,030,875
Ընդամենը			13,067,309

Հաշիվները պահվում են ՀՀ գանձապետարանում և ՀՀ վստահելի բանկերում:

6-19 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

7. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ

Հիմնադրամի գուտ ակտիվները ենթակա չեն բաժանման վերջինիս հիմնադիրների միջև՝ ոչ սովորական գործունեության, ոչ էլ դրա լուծարման դեպքում: Կուտակված արդյունքը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների ամբողջ շահույթ/վնասը:

8. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

Հիմնադրամի կողմից ծրագրերի իրականացման համար ստացված դրամաշնորհների շարժը հետևյալն է՝

Հազար դրամ

Վերջնական մնացորդն առ 31.12.2023թ.	177,262,715
Ստացված/(վերադարձված) դրամաշնորհներ	73,221,127
Փոխհատուցվող ծախսերի համապատասխան եկամուտ	(34,895,573)
Վերջնական մնացորդն առ 31.12.2024թ.	215,588,269
Ստացված/(վերադարձված) դրամաշնորհներ	474,292,520
Փոխհատուցվող ծախսերի համապատասխան եկամուտ	(36,252,087)
Վերջնական մնացորդն առ 31.12.2025թ.	653,628,702

9. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.
Շինարարական աշխատանքների գծով	7,443,611	10,871,293
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով	69,320	129,593
Այլ	1,182,433	729,545
Ընդամենը	8,695,364	11,730,431

Պահումները կատարվում են ծառայությունների դիմաց դուրս գրված հաշիվների մինչև 10% չափով (տոկոսադրույքը սահմանված է պայմանագրով)՝ մեկից երկու տարի ժամկետով կախված շինարարության բնույթից, որպես հետավարտական երաշխիքային փուլի հնարավոր թերությունների վերացման գումար:

Կրեդիտորական պարտքի մնացորդի մեջ ներառված հետավարտական երաշխիքային գումարները 31.12.2025թ-ի դրությամբ կազմում են 8,664,714 հազ. ՀՀ դրամ, 31.12.2024թ-ին՝ 10,995,951 հազ. ՀՀ դրամ:

10. ՇՆՈՐՀԻՑ ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Եկամտին վերաբերող շնորհներից եկամուտ	36,252,087	34,879,869
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	9,356	15,704
	36,261,443	34,895,573

11. ՀԱՐԿԵՐ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

6-19 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել: Կիրառելի հարկերը հաշվարկվում և վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենքների համաձայն: Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 2025թ-ի համար սահմանված է 18% (2024թ.՝ 18%):

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(16,242)	(39,366)
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում (ծախս)	10,351	(3,961)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	(5,891)	(43,327)

Հետաձգված հարկն առաջացել է աշխատակիցների վաստակած արձակուրդայինի գծով պահուստից:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՅԵՐ

Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ Հիմնադրամի մասնակցությամբ առկա են ստորև դատական գործերը՝

N	Գործի համարը, կողմերը և ներկայացված պահանջը	Գործի ընդհանուր նկարագիրը	Գործի քննության ընթացքը
Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2			
1	Վարչական գործ ՎԴ/2179/05/18 ըստ հայցի «ՍՎ.ԱՆ.ՈՐ» ընկերության ընդդեմ ՀՀ կառավարության, ՏԿԵՆ, երրորդ անձ՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ	Հայցվորը պահանջում է Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի ծրագծի փոփոխության արդյունքում կրած ենթադրյալ վնասի հատուցում՝ 309.050.000 ՀՀ դրամի չափով:	Դատաքննությունն ավարտվել է: Վճռի հրապարակման օր է նշանակվել 08.12.2025թ.: Վճիռը դեռ չի հրապարակվել:
2	Քաղաքացիական գործ N ԵԿԴ/0337/02/15 ըստ հայցի Արամայիս Մուրադյանի ընդդեմ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի	Հայցվորը պնդում է, որ Ծրագիր 2-ի շրջանակներում ոռոգման խողովակների տեղափոխման հետևանքով ջրագծերը քանդվել են, ուստի վերջինս չի կարողացել ջրել իր ծառերը, որոնք գտնվել են իրեն պատկանող Ագարակ համայնքի 201-012 ծածկագրով հողամասի վրա, որը ներկայում ՀՀ սեփականությունն է՝ օտարվել է Ծրագրի շրջանակներում: Նշված հիմքով պահանջում է վնասի հատուցում 3.469.900 ՀՀ դրամի չափով:	Հայցը բավարարվել է: Հիմնադրամի կողմից վճիռը բողոքարկվել վերաքննության և վճռաբեկության կարգով: ՀՀ Վճռաբեկ դատարանի 23.07.2025թ որոշմամբ վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը մերժվել է: Դատարան ակտը մտել է օրինական ուժի մեջ: Հայցվորին վճարվել է 3.469.900 ՀՀ դրամ:
3	Քաղաքացիական գործ N ԵԴ/18331/02/19 ըստ հայցի «Խոյանք» ՍՊԸ ընդդեմ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն	Հայցվորը պահանջում է անվավեր ճանաչել «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի 05.04.2019թ. թիվ 351 գրությամբ ներկայացված ծանուցումը՝ N ՏԾԻԿ-ԱՇՁԲ-2018/1ՆԱ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ	Դատաքննության փուլում է:
4	Քաղաքացիական գործ N ԵԴ2/0128/02/24 ըստ հայցի Արմեն Ավետիսյանն ընդդեմ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի	Հայցվորը պահանջում է օտարել հանրության գերակա շահ ճանաչված գույքի չօտարված մասը:	Նախնական դատական քննության փուլում է:
5	Քաղաքացիական գործ N ԵԴ2/0125/02/24 ըստ հայցի Արթուր Կնյազյան ընդդեմ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի:	Հայցվորը պահանջում է օտարել հանրության գերակա շահ ճանաչված գույքի չօտարված մասը	Կողմերի միջև դատական կարգով կնքվել է հաշտության համաձայնություն, որը հաստատվել է Երևան

6-19 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

			քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 02.05.2025թ. վճռով: Համաձայնությամբ հողամասի չօտարվող հատվածը և դրա վրա առկա շինությունն օտարվել է 39,967,504 ՀՀ դրամ գումարով: Գումարը վճարվել է Կնյազյանին:
6.	Քաղաքացիական գործ N ԵԴ2/7595/02/24 ըստ հայցի «Հիդրոէներգաշին» ՍՊԸ ընդդեմ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի երրորդ անձ «Ամիո բանկ» ՓԲԸ-ի	Հայցվորը պահանջում է թիվ ՏՏԻԳԱՇՁԲ1504-11/39 ՀՀ ՋՈՒՐ պայմանագրով կատարման ենթակա աշխատանքները 20.06.2018 թվականից «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից ընդունված համարել	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 14.05.2025 վճռով հայցը մերժվել է: Ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը վարույթ դեռ չի ընդունվել:
7.	Քաղաքացիական գործ N ԵԴ2/6202/02/25 ըստ հայցի «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ընդդեմ «Ամիո բանկ» ՓԲԸ-ի	Հայցվորը պահանջում է պարտավորեցնել «Ամիո բանկ» ՓԲԸ-ին կատարել իր կողմից թողարկված թիվ 5334-02 բանկային երաշխիքով սահմանված պարտավորությունը՝ վճարել 185.605.688 ՀՀ դրամ:	Գործը նախնական դատաքննության փուլում է : Տարվում են բանակցություններ գործը հաշտությամբ լուծելու համար:
8.	Քաղաքացիական գործ N ԵԴ2/6190/02/25 ըստ հայցի «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ընդդեմ «Ամիո բանկ» ՓԲԸ-ի	Հայցվորը պահանջում է պարտավորեցնել «Ամիո բանկ» ՓԲԸ-ին կատարել իր կողմից թողարկված թիվ 6177-02 բանկային երաշխիքով սահմանված պարտավորությունը՝ վճարել 203.500.000 ՀՀ դրամ:	Գործը նախնական դատաքննության փուլում է : Տարվում են բանակցություններ գործը հաշտությամբ լուծելու համար:
9.	Քաղաքացիական գործ N ԵԴ2/6139/02/25 ըստ հայցի «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ընդդեմ «Ամիո բանկ» ՓԲԸ-ի	Հայցվորը պահանջում է պարտավորեցնել «Ամիո բանկ» ՓԲԸ-ին կատարել իր կողմից թողարկված թիվ 5481-02 բանկային երաշխիքով սահմանված պարտավորությունը՝ վճարել 96.998.983 ՀՀ դրամ:	Գործը նախնական դատաքննության փուլում է : Տարվում են բանակցություններ գործը հաշտությամբ լուծելու համար:
10	Քրեական գործ ըստ մեղադրանքի Հովսեփ	Մեղադրանքն առաջադրված է այն բանի համար, որ մեղադրյալները	Գործը քննության փուլում է:

6-19 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Հակոբյանի, Կարապետ, Կարինե Աբրահամյանների, Քնարիկ Պետրոսյանի և Էլուշ և Էդգար Ավդալյանների «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը գործող հանդես է գալիս որպես տուժող ՀՀ-ի անունից:	տեղյալ լինելով, որ փաստացի իրենց պատկանող հանրության գերակա շահ ճանաչված հողամասերում պտղատու այգիներ չկան, խարդախությամբ ՀՀ, ի դեմս «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հետ կնքել են օտարման պայմանագրեր՝ հափշտակելով առանձնապես խոշոր չափերի գումար:	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը ներկայացրել է գույքային հայց:
--	---	--

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3

1.	Քաղաքացիական գործ N ՇԴ3/0010/02/17՝ ըստ հայցի Հայաստանի Հանրապետության, ի դեմս «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ընդդեմ Արթուր Աղաջանյանի, և «Հենգել Նազար» ՍՊԸ -ի՝ հողամասի օտարման պահանջով և Արթուր Աղաջանյանի, Մարինե Վանուշի Աղաջանյանի և «Հենգել Նազար» ՍՊԸ հակընդեմ հայցի ընդդեմ ՀՀ, ի դեմս «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի	ՀՀ-ն, ի դեմս ՊՈԱԿ-ի դիմել է դատարան Ծրագիր 3-ի շրջանակներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքում գտնվող 112-001 կադատրային ծածկագրով հողամասի մի մասի օտարման պահանջով: Օտարվող սեփականության սեփականատերը վիճարկում է հայցապահանջը՝ առարկելով հողամասի օտարման դիմաց տրամադրվող փոխհատուցման դեմ: Հակընդդեմ հայցով հայցվորները պահանջում են օտարել հողամասի մնացած մասը, ինչպես նաև վիճարկում են Ծրագրի շրջանակներում գնահատված հողամասի, դրա վրա առկա շինությունների փոխհատուցման արժեքը, փոխհատուցում են պահանջում հողամասին ամրացված հաղորդակցությունների դիմաց: <i>Սկզբնական հայցով փոխհատուցման գումար՝ 6.211.750,5 ՀՀ դրամ</i>	Գործն ավարտվել է հաշտության համաձայնությամբ:
2.	Քաղաքացիական գործ N ՇԴ/5525/02/19 ըստ հայցի՝ Արտավազ Կիրակոսյան ընդդեմ «Սինոհիդրո	Հայցվորները պնդում են, որ «Սինոհիդրո Քորպորեյշն» ընկերությունը Ծրագրի շրջանակներում իրականացվող	Հայցը մերժվել է: Ներկայացվել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ բողոք դեռ վարույթ չի ընդունվել:

	Քորփորեյշն» ընկերության, երրորդ անձ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ	շինարարական աշխատանքների արդյունքում վնասել է իրենց հողամասը, հողամասում ցանած սխտորը և, վերջիններս հնարավորություն չեն ունենցել 2017-2019թթ. մշակել իրենց հողամասը, ուստի պահանջում են վնասի հատուցում 46.799.940 ՀՀ դրամի չափով:	
--	---	---	--

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր- Ծրագիր 4

1.	Քաղաքացիական գործ N ՍԴ-2/0826/02/21՝ ըստ հայցի Սուրեն Չարիկի Հայրապետյանի ընդդեմ Մեղրի համայնքի, Արամ Կարլենի Գուգարացի, Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի, երրորդ անձ ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Մարինե Սարգսյանի և Կադաստրի կոմիտեի	Հայցի առարկա հանդիսանում է հանրության գերակա շահ ճանաչված և ՀՀ-ին օտարված հողամասը: Հայցվորը պահանջում է օտարված հողամասը տիրազուրկ ճանաչել և ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը հողամասի նկատմամբ: Հայցվորը պահանջում է նաև 24.12.2021թ. Արամ Գուգարացին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը՝ հողամասն ընդունելու մասով և հողամասի նկատմամբ Գուգարացի անվամբ սեփականության իրավունքի գրանցման գրառումը անվավեր ճանաչել, ինչպես նաև անվավեր ճանաչել 17.08.2023թ. Գուգարացի հետ կնքված օտարման պայմանագիրը, դրա պետական գրանցման գրառումը և պարտավորեցնել վերջինիս վերադարձնել գործարքով ստացած գումարը:	Քաղաքացիական գործ N ՍԴ-2/0826/02/21՝ ըստ հայցի Սուրեն Չարիկի Հայրապետյանի ընդդեմ Մեղրի համայնքի, Արամ Կարլենի Գուգարացի, Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի, երրորդ անձ ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Մարինե Սարգսյանի և Կադաստրի կոմիտեի
2.	Քաղաքացիական գործ՝ N ԵԴ-2/3647/02/25 ըստ հայցի Սերյոժա Արզումանյանի ընդդեմ Առնո Առաքելյանի , Մասիս Ստեփանյանի, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի	Հայցի առարկա հանդիսանում է հանրության գերակա շահ ճանաչված և ՀՀ-ին օտարված հողամասը: Հայցվորը պահանջում է 30.04.2024թ Մասիս Ստեփանյանին տրված ժառանգության իրավունքի վկայագիրն և Մասիս Ստեփանյանի անվամբ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գրառումն անվավեր ճանաչել: Հայցվորը պահանջում է	Քաղաքացիական գործ՝ N ԵԴ-2/3647/02/25 ըստ հայցի Սերյոժա Արզումանյանի ընդդեմ Առնո Առաքելյանի , Մասիս Ստեփանյանի, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի

		նաև 21.05.2024թ Մասիս Ստեփանյանի հետ կնքված օտարման պայմանագիրը և պայմանագրի պետական գրացման վերաբերյալ գրառումն անվավեր ճանաչել, ինչպես նաև պարտավորեցնել վերջինիս վերադարձնել գործարքով ստացած գումարը:	
Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր			
1.	Քաղաքացիական գործ N ԵԴ/5312/02/18 ըստ հայցի Ալվարդի Անանյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի	Հայցվորը պահանջում է օտարել հանրության գերական շահ ճանաչված հողամասի չօտարվող հատվածը:	Գործով նշանակվել է կրկնակի և լրացուցիչ փորձաքննություն: Գործի վարույթը կասեցված է:
2.	Քաղաքացիական գործ N ԵԴ/9966/02/18 ըստ հայցի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ընդդեմ «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի, «Արարատ-Ճանշին» ՍՊԸ, «Տեր-Հայրապետյան ՇԻՆ» ՍՊԸ, «Հիդրոէնշին» ՍՊԸ՝ պատճառված վնասը համապարտության կարգով փոխհատուցման պահանջի մասին	Հայցվորը պնդում է, որ Ծրագրի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում շահագործվող էքսկավատորի շերտիի ատամների հարվածի հետևանքով վնասվել է տվյալ հատվածում գտնվող «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին վարձակալության իրավունքով հանձնված «Նովոսելցովո» ջրատարը, որի հետևանքով վերջինիս պահանջում է վնասի հատուցում: Հայցագին՝ 16.410.240 ՀՀ դրամ	Հայցը մերժվել է:
3.	Քաղաքացիական գործ N ԵԴ/12301/02/19 ըստ հայցի Արթուր Մովսիսյանի, ընդդեմ Հայաստանի Հանրապետության և «Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամի՝ Հայցագին՝ 1.265.000 ՀՀ դրամ	Հայցվորը պնդում է, որ Ծրագրի շրջանակներում վերակառուցվող ճանապարհի փակման, հաղորդակցությունների տեղափոխման հետևանքով վերջինիս բիզնեսը վնաս է կրել, ուստի պահանջում է վնասի հատուցում: Պահանջը՝ պատճառված վնասը հատուցել	Հայցը մերժվել է:
4.	Վարչական գործ N ՎԴ/13381/05/21 ըստ հայցի Սիրուշ Մարտիրոսյանի ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքի, երրորդ անձինք Արտաշես Լալայանի, «Ճանապարհների դեպարտամենտ» հիմնադրամի	Հայցի առարկա հանդիսանում է հանրության գերակա շահ ճանաչված և Արտաշես Լալայանի հետ կնքված օտարման պայմանագրի հիման վրա ՀՀ-ին օտարված հողամասը: Հայցվորը պնդում է, որ առկա է կադաստրային սխալ, հողամասը պատկանում է իրեն, ուստի պահանջում է գույքի նկատմամբ	ՀՀ վարչական դատարանի 09.12.2025թ. վճռով հայցը մերժվել է: Վերաքննիչ բողոք դեռ չի ստացվել:

		Արտաշես սեփականության հավաստող անվավեր ճանաչել:	Լալայանի իրավունքը իրավական հիմքերն	
5.	Քաղաքացիական գործ ԵԴ/63506/02/22 «Ճառագայթ» ՓԲԸ ընդդեմ «Հորիզոն-95» ՍՊԸ և «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի	N և	Հայցվորը պահանջում է NCW- ICB- M6/2016 պայմանագրի կատարման նկատակով կողմերի միջև կնքված ենթակապալի պայմանագրով իրավահարաբերությունը դադարած ճանաչել, ինչպես նաև ճանաչել ենթակապալի պայմանագրով կատարված աշխատանքների դիմաց վճարում ստանալու հայցվորի իրավունքը :	Գործը դատաքննության փուլում է:

12. ՀԵՏԱԾՎԵԿԵՌԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղեկավարության հավաստմամբ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք կարող էին էական ազդեցություն ունենալ հաշվետվությունների արդյունքների վրա:

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐ - ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝



ԱՐԿԱԴԻ ՉԵՐՉԻՆՅԱՆ

ՇՈՒԽԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ